| **Տիրույթ** | |
|---|---|
| **Որակի տիրույթ** | Մշտադիտարկումներ |
| **Կապ որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների պահանջներին** | ՈԱԵՉՈՒ չափանիշներ: 2.2, 2.3, 2.4, 3.1 |
| **Գործողության տարիներ** | 2021-2025 |
| **Հաստատված** | ՈԱԱԿ տնօրեն |
| **Տարբերակ** | 01 |
| **Տիրույթի պատասխանատու** | Մշտադիտարկումների պատասխանատու |

**Ռազմավարական նպատակները**

1. Խրախուսել և ամրապնդել մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթը,
2. ապահովել շահակիցների հետ նախաձեռնողական և շարունակակական հաղորդակցումն ու համագործակցությունը:

**Թիրախները**

1. Մասնագիտական կրթական համակարգի մասին վստահելի տեղեկատվության հավաքագրմամբ հավատարմագրման գործընթացների արդյունավետության, ձևաչափերի կիրառելիության և բարելավման ընթացքի գնահատում,
2. մասնագիտական կրթության ոլորտում լավագույն փորձի տարածելով և խրախուսելով նորարության խթանում,
3. շարունակական նախաձեռնողական հաղորդակցության միջոցով ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ավելացում կրթության որակի բարելավման գործընթացներում:

**Գնահատման ցուցիչները**

1. Մշտադիտարկումները ճանաչվում են տեղեկատվության հավաքագրման վստահելի աղբյուր և հանդիսանում են ուղեցույց մասնագիտական կրթություն տրամադրողների համար որակի շարունակական մշակույթի խրախուսման, ամրապնդման և թերությունների վերացման ընթացքը գնահատելու համար:
2. Կրթության որակի մշակույթի շուրջ շահակիցների տարբեր խմբերի միջև հաղորդակցության և համագործակցության շրջանակն ընդլայնվում է:
3. Մշտադիտարկումները ծառայում են ՈԱԱԿ հավատարմագրման գործընթացների շարունակական բարելավման գործիք:

**Գործողությունների նկարագրությունը**

1. ՄՈՒՀ-երի որակի ներքին ապահովման համակարգերի ընթացիկ վիճակի ուսումնասիրություն՝ տեղեկատվության հավաքագրման և վերլուծության միջոցով,
2. հավատարմագրված ՄՈՒՀ-երում առաջընթացի և թերությունների վերացման ծրագրի կատարման արդյունքների գնահատում,
3. մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
4. հավատարմագրման գործընթացի ազդեցության գնահատում,

| |
|---|
| 5. ՄՈՒՀ-երի շահակիցների ներքին կարողությունների զարգացում,<br>6. մշտադիտարկումների արդյունքների հիման վրա Հավատարմագրման հանձնաժողովին և/ կամ լիազոր մարմնին տեղեկատվություն կամ առաջարկությունների տրամադրում: |
| **Գնահատումը** |
| 1. Տարեկան կտրվածքով ինստիտուցիոնալ և ծրագրային մշտադիտարկումներում ներառված հաստատությունների, մասնագիտության կրթական ծրագրերի և այդ գործընթացներում ներգրավված շահակիցների թվաքանակ,<br>2. մշտադիտարկման գործընթացների արդյունավետության գնահատում ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացված քննարկումների և հարցումների միջոցով,<br>3. ազդեցության գնահատում մշտադիտարկման զեկույցների վերլուծության միջոցով: |
| **Պատասխանատվությունը** |
| Մշտադիտարկումների պատասխանատու |
| **Հաշվետվությունը** |
| 1. Մշտադիտարկման զեկույցներ,<br>2. տարեկան հաշվետվություն,<br>3. թեմատիկ վերլուծություն: |
| **Բարելավումը** |
| Հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների կարծիքները, ՄՈՒՀ-երի կողմից իրականացված գնահատումները՝ գործընթացների իրականացման մեջ շարունակաբար կատարվում են փոփոխություններ, բարելավվում են կիրառվող ձևաչափերը, ընդլայնվում է շահակիցների շրջանակը: |
| **Կարգավորող փաստաթղթերը** |
| 1. «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներ,<br>2. Որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2016թ. թիվ 714-Ն որոշում,<br>3. ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին ՀՀ կառավարության 2011թ. թիվ 959-Ն որոշում,<br>4. Պետական հավատարմագրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2011թ. թիվ 978-Ն որոշում,<br>5. ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկ,<br>6. «Մասնագտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի մշտադիտարկումների քաղաքականություն,<br>7. Մշտադիտարկումների քաղաքականությունից բխող ձևաչափեր: |

**Հաստատված՝**
**ՈԱԱԿ տնօրեն**
**Ռուբեն Թոփչյան**
**18.10.2021թ.**